5. Աշխատակազմի լիազորությունները սահմանվում են օրենքներով, այլ իրավական ակտերով, այդ թվում՝ ավագանու որոշումներով, համայնքի ղեկավարի որոշումներով ու կարգադրություններով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

6. Աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, սույն կանոնադրության հիման վրա:

7. Աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող

8. Աշխատակազմը կարող է կազմված լինել կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից:

9. Աշխատակազմի նպատակն ու խնդիրը համայնքի ղեկավարի և ավագանու՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին համայնքի ղեկավարի մասնակցության ապահովումն է:

10. Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում համայնքը:

11. Աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության կամ համայնքի զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ, այլ անհատականացման միջոցներ:

12. Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

13. Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող են գանձվել պետական և տեղական տուրքեր, տեղական վճարներ՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

14. Աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

14.1 Օրենքով սահամանված կարգով ապահովում է համայնքի զինապարտների գրանցամատյանի վարումը:

15. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանման կողմից:

16. Աշխատակազմի լրիվ անվանումն է՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ:

17. Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Քաջարան քաղաք Լեռնագործների 4:

## 2. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

18. Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ օրենքով, այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

19. Համայնքի ղեկավարն իր լիազորությունները իրականացնում է Աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ներկայացուցչի ( այսուհետ՝ վարչական ներկայացուցիչ) , համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

20. Համայնքի ղեկավարը՝

1) աշխատակազմի (այդ թվում առանձնացված ստորաբաժանումների) և բյուջետային հիմնարկների կանոնադրությունների, կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը

2) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

3) օրենքով նախատեսված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում է դասային աստիճաններից.

4) ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում:

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

20.1 Վարչական ներկայացուցիչը՝

1) բնակավայրի տարածքում գործում է համայնքի ղեկավարի անունից.
2) հետևում է բնակավայրի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների իրականացմանը և այդ մասին տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին.
3) կազմակերպում է բնակավայրում ավագանու անդամի կողմից բնակիչների ընդունելությունները.
4) բնակավայրերի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում

վերջիններիս մասնակցությամբ միջոցառումների՝ սահմանված իրավական ակտերով, ինչպես նաև ավագանու ընդունած՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին որոշմամբ.

5) << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների իրականացումը.

6) համայնքի ավագանու սահմանված կարգին համապատասխան՝ անցկացնում է բնակավայրին վերաբերվող հարցերի հանրային լսումներ կամ քննարկումներ և արդյունքների վերաբերյալ տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին.

7) մասնակցում է համայնքի ավագանու նիստին.

8) պատասխանատվություն է կրում վարչական ներկայացուցչի նստավայրին հատկացված՝ աշխատակազմին ամրացված, գույքի պահպանության համար.

9) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

10) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, բնակավայրում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.

21. Համայնքի ղեկավարի տեղակալը՝

1) համակարգում է համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքները՝ համայնքի ղեկավարի կողմից իրեն հանձնարարված բնագավառներում.

2) Աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառների՝ Աշխատակազմին (մասնագետներին, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին) տրվող կոնկրետ հանձնարարականների և առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն.

3) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է ավագանու և համայնքի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ.

4) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում Աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), ինչպես նաև համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

5) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

6) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները.

7) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին.

8) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում համայնքի ղեկավարին.

9) համայնքի ղեկավարին և Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ վերջիններիս իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ.

10) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

11) անմիջականորեն ենթակա և հաշվետու է համայնքի ղեկավարին.

22. Համայնքի ղեկավարի տեղակալը փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:

23. Համայնքի ղեկավարի տեղակալին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

24. Համայնքի ղեկավարը կարող է ունենալ խորհրդականներ, օգնականներ, մամուլի քարտուղար, ռեֆերենտ, որոնց միջև պարտականությունների բաշխումը կատարում է համայնքի ղեկավարը

25. Համայնքի ղեկավարի խորհրդականը՝

1) համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմում է իր աշխատանքային ծրագիրը.

2) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում զեկուցումներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրենց հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի, երևույթների և իրադարձությունների մասին և առաջարկություններ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ.

3) կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.

4) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում՝ իրեն հանձնարարված բնագավառներին վերաբերող հարցերի քննարկմանը.

5) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ.

6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

26. Համայնքի ղեկավարի օգնականը՝

1) կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում համայնքի ղեկավարին.

2) համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմակերպում է համայնքի ղեկավարի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրերի նախապատրաստումը և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարին.

3) կազմակերպում է համայնքի ղեկավարի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը.

4) համագործակցելով Աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների) հետ՝ համայնքի ղեկավարի համար նախապատրաստում է տեղեկատվական և վերլուծական նյութեր.

5) նախապատրաստում և համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ աշխատանքային ծրագրերի վերաբերյալ.

6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

27. Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարը՝

1) համայնքի ղեկավարի պաշտոնական տեսակետները ներկայացնում է տեղեկատվության միջոցներին.

2) անցկացնում է ասուլիսներ և ճեպազրույցներ.

3) իր գործունեության ծրագրման և իրականացման վերաբերյալ առաջարկություններ ու վերլուծություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցնելուց հետո հետևում դրանց իրականացմանը.

4) կազմակերպում է համայնքի ղեկավարի հարցազրույցները, ասուլիսները և հանդիպումները մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների հետ.

5) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հանդես է գալիս հայտարարություններով, պարզաբանումներով, հերքումներով.

6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

28. Համայնքի ղեկավարի ռեֆերենտը՝

1) իրականացնում է համայնքի ղեկավարի ելույթների և նամակների, ինչպես նաև նրա անունից նախապատրաստվող այլ փաստաթղթերի նախապատրաստումը.

2) իրականացնում է տեղեկատվական-խորհրդատվական, վերլուծական աշխատանքներ.

3) կատարում է համայնքի ղեկավարի առանձին հանձնարարականներ:

29. Ավագանին՝

1) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ.

2) որոշում է Աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

2.1) հաստատում է համայնքի ղեկավարի ներկայացրած վարչական ներկայացուցչի թեկնածությունը ներկայացնելու և համաձայնեցնելու կարգը:

3) հաստատում է Աշխատակազմի կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և աշխատակիցների թվաքանակը:

4) սահմանում է համայնքի ղեկավարի, նրա տեղակալի, խորհրդականի, օգնականի, մամուլի քարտուղարի, վարչական ներկայացուցչի, Աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը:

5) օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

6) օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

7) սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

8) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, իսկ հաստատում է դրանց վարձավճարների և օտարման գների չափերը և պայմանները, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գները.

9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

30. Աշխատակազմի ընթացիք գործունեության ղեկավարումն իրականացնում է Աշխատակազմի քարտուղարը:

31. Աշխատակազմի քարտուղարը՝

1) օրենքով, այլ իրավական ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների `սահմաններում ղեկավարում է

Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

2) իր իրավասության շրջանակում իրականացնում է Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը.

3) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ:

4) մշակում և համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի աշխատանքային տարեկան և եռամսյակային ծրագրերը, վերահսկողություն է իրականացնում դրանց կատարման նկատմամբ, արդյունքների մասին զեկուցում է համայնքի ղեկավարին.

5) ապահովում է համայնքի բյուջետային միջոցներից ծախսերի կատարումը.

6) կազմակերպում է համայնքի քաղաքացիների ընդունելությունը, նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների սահմանված կարգով քննարկումը, ինչպես նաև Աշխատակազմի գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

7) համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է Աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելն ու ներկայացնելը, ինչպես նաև Աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումների արդյունքում հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.

8) համայնքի ղեկավարի ստորագրությանն է ներկայացնում համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների նախագծերը.

9) ապահովում է Աշխատակազմում համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.

10) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

11) օրենքով սահմանված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում համայնքային ծառայության դասային աստիճաններից.

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է Աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

13) օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ենթակա ցուցումներ.

14) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

32. Աշխատակազմի քարտուղարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

33. Աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է Աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է համայնքի ղեկավարի անմիջական ենթակայությամբ և իրականացում Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով իր վրա դրված լիազորությունները:

34. Աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը իր իրավասությունների սահմաններում պատասխանատու է համայնքի բյուջեի նախագծի կազմման, հաշվապահական հաշվառումը վարելու, Աշխատակազմի ֆինանսական (բյուջետային), հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների մասին հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

35. Աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և ներքին աուդիտորներն իրականացնում են «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորությունները: Աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը հաշվետու է համայնքի ղեկավարին ու օրենքով նախատեսված դեպքերում վերջինիս ներկայացնում է հաշվետվություններ:

## 3. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

36. Աշխատակազմի գույքը օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքի սեփականությանը փոխանցված և (կամ) համայնքի սեփականությունը համարվող գույքից, որն Աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնվում է (ամրացվում է) ավագանու համապատասխան որոշմամբ: Աշխատակազմի գույքը ենթակա է հաշվառման նրա հաշվեկշռում:

37. Աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

## 4. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

38. Համայնքի ղեկավարն իր պաշտոնը ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, ինչպես նաև համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում, ինչպես նաև աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը: Աշխատակազմի կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների նվազագույն թվաքանակը սահմանում է պետական լիազորված մարմինը:

39. Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներն, ինչպես նաև բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպություններն ունեն կանոնադրություններ, որոնք համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում են համայնքի ավագանու կողմից:

## 5. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

40. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների, վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

41. Աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով:

## 6. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

42. Աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավար՝ Մ. Փարամազյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajaran.syunik@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 48-Ա

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1 և N2 հավելվածների.
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ենթակայության «Քաջարանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N3 հավելվածի.
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ենթակայության «Քաջարանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N4 հավելվածի.
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ենթակայության «Քաջարանի գրադարանային միավորում» ՀՈԱԿ-ի աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N5 հավելվածի.
5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ենթակայության «Լեռնաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N6 հավելվածի.
6. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ենթակայության «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ի կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N7 և N8 հավելվածների.

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 17-ի N4-Ն, 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N8-Ա, 2018 թվականի հունվարի 31-ի N3-Ա, 2018 թվականի հունվարի 31-ի N4-Ա, 2018 թվականի մայիսի 21-ի N26-Ա, 2018 թվականի օգոստոսի 24-ի N46-Ա, 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N66-Ա, 2019 թվականի փետրվարի 08-ի N4-Ա, 2019 թվականի մարտի 06-ի N10-Ա, 2019 թվականի մայիսի 08-ի N17-Ա, 2019 թվականի հուլիսի 30-ի N29-Ա, 2019 թվականի սեպտեմբերի 19-ի N34-Ա և 2019 թվականի սեպտեմբերի 19-ի N38-Ա որոշումները:
8. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ սույն որոշմամբ հաստատված N2 հավելվածի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն որոշմամբ հաստատված N2 հավելվածի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում կատարված համապատասխան փոփոխությունների վերաբերյալ դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխությունների մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան հրամանն ուժի մեջ մտնելու պահից:

Անդրեասյան Արմեն-կողմ | Առաքելյան Սասուն-կողմ

Աթայան Մերուժան-կողմ | Գևորգյան Մարինա-կողմ

Ստեփանյան Դերենիկ-կողմ | Մակիյան Կարինե-կողմ

Համբարձումյան Կարեն-կողմ | Սաղաթելյան Էրիկ-կողմ

Իսրայելյան Գարիկ-կողմ | Հակոբյան Արմեն-կողմ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

**27 դեկտեմբերի 2019թ., Քաջարան**

Հավելված 1

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի

ավագանու 2019թ. Դեկտեմբերի 23-ի 48-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Քաղաքաշինության, հողի վերահսկողության, կոմունալ տնտեսության, տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժին
2. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման բաժին
3. Եկամուտների հավաքագրման և քաղաքացիների սպասարկման կազմակերպական բաժին
4. Բնապահպանության, գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժին
5. Ներքին աուդիտի բաժին

## ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Քաջարանի տարածքային բաժին

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի

Քաջարան համայնքի ղեկավար՝ Մ.Փարամազյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան
համայնքի ավագանու 2019թ.-ի
դեկտեմբերի 23 ի
թիվ 48-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 54

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար նախկին) | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար նոր) | Ընդամենը աշխատավարձ |
|---|---|---|---|---|---|
| | ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 440 000 | 440 000 | 440 000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 358 000 | 358 000 | 358 000 |
| 3 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 290 000 | 315 000 | 315 000 |
| 4 | Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար | 1 | 300 000 | 300 000 | 300 000 |
| 5 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 220 000 | 220 000 | 220 000 |
| 6 | Վարչական ղեկավար | 1 | 200 000 | 250 000 | 250 000 |
| 7 | Վարչական ղեկավար | 1 | 200 000 | 250 000 | 250 000 |
| 8 | Վարչական ղեկավար | 1 | 180 000 | 200 000 | 200 000 |
| 9 | Վարչական ղեկավար | 1 | 180 000 | 200 000 | 200 000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 9 | 2 368 000 | 2 533 000 | 2 533 000 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| 10 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 350 000 | 350 000 | 350 000 |
| | Քաղաքաշինության, հողի վերահսկողության,կոմունալ տնտեսության,տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժին | | | | |
| 11 | Բաժնի պետ | 1 | 315 000 | 315 000 | 315 000 |
| 12 | Գլխավոր մասնագետ | 3 | 270 000 | 270 000 | 810 000 |
| 13 | Առաջատար մասնագետ | 1 | 168 000 | 168 000 | 168 000 |
| 14 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 138 000 | 138 000 | 138 000 |
| | Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման բաժին | | | | |
| 15 | Բաժնի պետ | 1 | 315 000 | 315 000 | 315 000 |
| 16 | Գլխավոր մասնագետ | 3 | 270 000 | 270 000 | 810 000 |
| 17 | Առաջին կարգի մասնագետ | 2 | 138 000 | 138 000 | 276 000 |
| | Բնապահպանության,գյուղատնտեսության և տնտեսական զարգացման ծրագրերի բաժին | | | | |
| 18 | Բաժնի պետ | 1 | 315 000 | 315 000 | 315 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 19 | Գլխավոր մասնագետ | 2 | 0 | 270 000 | 540 000 |
| 20 | Առաջատար մասնագետ | 2 | 168 000 | 168 000 | 336 000 |
| ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | | | | |
| 21 | Գլխավոր մասնագետ | 2 | 270 000 | 270 000 | 540 000 |
| 22 | Առաջատար մասնագետ | 2 | 168 000 | 168 000 | 336 000 |
| ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԲԱԺԻՆ | | | | | |
| 23 | Աշխատակազմի կազմակերպական բաժնի պետ | 1 | 0 | 315 000 | 315 000 |
| 24 | Առաջատար մասնագետ | 3 | 0 | 168 000 | 504 000 |
| 25 | Առաջին կարգի մասնագետ | 4 | 0 | 138 000 | 552 000 |
| ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ | | | | | |
| 26 | Բաժնի պետ | 1 | 315 000 | 315 000 | 315 000 |
| ՔԿԱԳ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ | | | | | |
| 27 | Բաժնի պետ | 1 | 256 000 | 256 000 | 256 000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 32 | 3456000 | 4347000 | 7191000 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | | | |
| 28 | ՀԿՏՀ կառավարող | 1 | 200 000 | 200 000 | 200 000 |
| 29 | Ռեֆերենտ | 1 | 138 000 | 138 000 | 138 000 |
| 30 | Օժանդակ բանվոր | 1 | 120 000 | 120 000 | 120 000 |
| 31 | Գործավար | 1 | 160 000 | 200 000 | 200 000 |
| 32 | Ցրիչ | 1 | 96 000 | 96 000 | 96 000 |
| 33 | Ավտովարորդ | 1 | 150 000 | 150 000 | 150 000 |
| 34 | Տնտեսվար | 1 | 120 000 | 120 000 | 120 000 |
| 35 | Էլեկտրիկ | 1 | 120 000 | 120 000 | 120 000 |
| 36 | Հավաքարար | 3 | 96 000 | 96 000 | 288 000 |
| 37 | Կաթսայատան բանվոր | 1 | 96 000 | 125 000 | 125 000 |
| 38 | Եկամուտներ հավաքագրող | 1 | 168 000 | 168 000 | 168 000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 13 | 1 464 000 | 1 533 000 | 1 725 000 |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ | 54 | 7 288 000 | 8 413 000 | 11 449 000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] Մ.ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան
համայնքի ավագանու
2019թ.-ի դեկտեմբերի 23-ի
թիվ 48-Ա որոշման

# « Քաջարանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ

1. Աշխատակազմի թվաքանակը՝31
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

«Քաջարանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակի 1/մեկ/ դրույքը սահմանել 9/ինը/ ժամ

| Հաստիքների անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/ նախկին | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/ նոր |
|---|---|---|---|
| Տնօրեն | 1 | 200 000 | 200 000 |
| Մեթոդիստ | 1 | 145 000 | 145 000 |
| Գլխ. հաշվապահ | 1 | 140 000 | 140 000 |
| Դաստիարակ | 6,25 | 188 800 | 188 800 |
| Երաժիշտ | 1 | 115 000 | 115 000 |
| Օտար լեզվի դաստ. | 0,5 | 110 000 | 110 000 |
| Դաստ. օգնական | 5,5 | 100 000 | 100 000 |
| Տնտեսվար | 2 | 96 000 | 96 000 |
| Խոհարար | 1 | 110 000 | 110 000 |
| Խոհարարի օգնական | 1 | 106 000 | 106 000 |
| Սպասք լվացող | 1 | 96 000 | 96 000 |
| Լվացքարար և արդուկող | 1 | 96 000 | 96 000 |
| Քույր | 1 | 96 000 | 96 000 |
| Հավաքարար | 1 | 100 000 | 100 000 |
| Դռնապան | 1 | 90 000 | 92 000 |
| Կաթսայատան բանվոր | 1 | 80 000 | 92 000 |
| Պարուսույց | 1 | 114 000 | 114 000 |
| Սպորտ հրահանգիչ | 0,75 | 114 000 | 114 000 |
| լոգոպետ-լեզվաբան | 1 | - | 100 000 |
| Ընդամենը | 29 | 2 096 800 | 2 210 800 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան
համայնքի ավագանու
2019թ.-ի դեկտեմբերի 23-ի
թիվ 48-Ա որոշման

# «Քաջարանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ

1. Աշխատակազմի թվաքանակը՝44
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

,,Քաջարանի մանկական արվեստի դպրոց,,ՀՈԱԿ-ում սահմանել 1/մեկ/ դրույքը ըստ դասաժամերի

1. Անհատական ------ 18/տասնութ/ ժամ
2. Խմբակային ------ 16/տասվեց/ ժամ
3. Կոնցերտմեյստ ------ 18/տասնութ/ ժամ

Վարձատրության չափը սահմանել ըստ մասնագիտությունների

1.Ուսուցիչների մեկ դրույքի վարձաչափը ըստ ստաժի և կրթության

| Դրույքը ըստ ստաժի | Դրույքի չափը/նախկին/ | Դրույքի չափը/նոր/ |
|---|---|---|
| 0-8 տարի /միջին մասնագիտական / | 98 000 | 98 000 |
| 9-15 տարի / միջին մասնագիտական / | 99 000 | 99 000 |
| 16-ից բարձր /բարձրագույն կրթությամբ / | 100 000 | 100 000 |

| Հաստիքների անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/ նախկին | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/ նոր |
|---|---|---|---|
| Տնօրեն | 1 | 200 000 | 200 000 |
| Ուսմասվար | 1 | 145 000 | 145 000 |
| Գլխ. հաշվապահ | 1 | 140 000 | 140 000 |
| Գրադարանավար | 1 | 92 000 | 92 000 |
| Գործավար | 1 | 92 000 | 92 000 |
| Տնտեսվար | 1 | 92 000 | 92 000 |
| Քույր | 1 | 92 000 | 92 000 |
| Հավաքարար | 3 | 84 000 | 92 000 |
| Դռնապան-պահակ | 2 | - | 92 000 |
| Ընդամենը | 12 | 937 000 | 1 037 000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան
համայնքի ավագանու
2019թ.-ի դեկտեմբերի 23-ի
թիվ 48-Ա որոշման

# ,,Քաջարանի գրադարանային միավորում,, ՀՈԱԿ

1. Աշխատակազմի թվաքանակը՝17
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքների անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/ նախկին | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/ նոր |
|---|---|---|---|
| Տնօրեն | 1 | 170 000 | 170 000 |
| Հաշվապահ | 1 | 130 000 | 130 000 |
| Ավագ գրադարանավար | 3 | 95 000 | 95 000 |
| Գրադարանավար | 6 | 90 000 | 92 000 |
| համակարգչի օպերատոր | 1 | 90 000 | 92 000 |
| Հավաքարար | 2 | 86 000 | 92 000 |
| Գրադարանավար/Լեռնաձոր/ | 1 | 90 000 | 92 000 |
| Գրադարանավար/Գեղի/ | 1 | 90 000 | 92 000 |
| Գրադարանավար/Ն.Աստղաբերդ/ | 1 | 90 000 | 92 000 |
| Ընդամենը | 17 | 931 000 | 947 000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

Հավելված 6
ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան
համայնքի ավագանու
2019թ.-ի դեկտեմբերի 23-ի
թիվ 48-Ա որոշման

## ,,Լեռնածորի մանկապարտեզ,, ՀՈԱԿ

1. Աշխատակազմի թվաքանակը՝7
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքների անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/ նախկին | Պաշտոնային դրույքաչափ /ՀՀ դրամ/ նոր |
|---|---|---|---|
| Մանկապարտեզի վարիչ | 1 | 132 000 | 132 000 |
| հաշվապահ | 1 | 96 000 | 96 000 |
| դաստիարակ | 1 | 102 000 | 102 000 |
| դաստիարակի օգնական | 1 | 90 000 | 92 000 |
| խոհարար | 1 | 90 000 | 92 000 |
| օժանդակ բանվոր | 1 | 90 000 | 92 000 |
| տնտեսավար | 1 | - | 92 000 |
| Ընդամենը | 6 | 484 000 | 698 000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

Հավելված 7

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի

ավագանու 2019թ. Դեկտեմբերի 23-ի 48-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Վարչակազմ
2. Վթարային- վերանորոգման ստորաբաժանում
3. Խմելու ջրի ֆիլտրման կայան
4. Աղբահանության ստորաբաժանում
5. Լուսավորության սպասարկման ստորաբաժանում
6. Սանիտարական մաքրման և բարեկարգման ստորաբաժանում

Հավելված 8
ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի
ավագանու 2019թ.- դեկտեմբերի 23-ի
թիվ 48-Ա որոշման

<<ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՓԲԸ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԵՎ ԺԱՄԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/ |
|---|---|---|---|
| ՎԱՐՉԱԿԱԶՄ | | | |
| 1 | Տնօրեն | 1 | 650000 |
| 2 | Գլխավոր ճարտարագետ | 1 | 500000 |
| 3 | Ջրագծի ներքին ցանցի պատասխանատու | 1 | 270000 |
| 4 | Գլխավոր հաշվապահ | 1 | 500000 |
| 5 | Ավագ հաշվետար | 1 | 230000 |
| 6 | Հաշվետար | 4 | 160000 |
| 7 | Մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետ | 1 | 300000 |
| 8 | Գրասենյակի մենեջեր | 1 | 140000 |
| 9 | Պահեստապետ | 1 | 200000 |
| 10 | Պահեստապետի օգնական | 1 | 100000 |
| 11 | Հավաքարար | 1 | 100000 |
| Ընդամենը | | 14 | |
| ՎԹԱՐԱՅԻՆ-ՎԵՐԱՆՈՐԱԳՄԱՆ ՍՏՈՒԲԱԺԱՆՈՒՄ | | | |
| 1 | Ստորաբաժանման ղեկավար | 1 | 370000 |
| 2 | Վերանորոգման փականագործ | 4 | 260000 |
| 3 | Փականագործ | 3 | 200000 |
| 4 | Զոդող գազաէռակցող | 1 | 400000 |
| 5 | Բանվոր | 2 | 100000 |
| 6 | Վարորդ | 1 | 300000 |
| Ընդամենը | | 12 | |
| ԽՄԵԼԱՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆ | | | |
| 1 | Կայանի պետ | 1 | 350000 |
| 2 | Լաբորանտ | 1 | 140000 |
| 3 | Օպերատոր | 10 | 756 |
| Ընդամենը | | 12 | |
| ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ | | | |
| 1 | Ստորաբաժանման ղեկավար | 1 | 350000 |
| 2 | Վարորդ | 2 | 2790 |
| 3 | Բանվոր | 3 | 2000 |
| 4 | Ավտոմեխանիկ | 1 | 300000 |
| Ընդամենը | | 7 | |
| ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ | | | |
| 1 | Գլխավոր էներգետիկ | 1 | 283000 |
| 2 | Էլեկտրիկ | 2 | 140000 |
| 3 | Վարորդ | 1 | 283000 |
| Ընդամենը | | 4 | |

| ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ | | | |
|---|---|---|---|
| 1 | Ստորաբաժանման ղեկավար | 1 | 296000 |
| 2 | Բրիգադիր | 1 | 132000 |
| 3 | Բակային հավաքարար | 8 | 213500 |
| 4 | Բակային հավաքարար | 3 | 132000 |
| 5 | Բակային հավաքարար | 1 | 93000 |
| 6 | Բարեկարգման բանվոր | 9 | 120000 |
| 7 | Բարեկարգման բանվոր | 1 | 93000 |
| 8 | Տարածքի պատասխանատու | 2 | 1980 |
| 9 | Գերեզմանատան վերակացու | 2 | 120000 |
| 10 | Վարորդ | 1 | 132000 |
| Ընդամենը | | 29 | |
| 1 | Նոր Աստղավերդ, Գեղի, Ջագեձոր գյուղերի ջրամատակարարման համակարգերի հսկիչ-փականագործ | 2 | 145000 |
| **Ընդամենը** | | **80** | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajaran.syunik@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 49-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18–րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 7, 8, 10, 11 հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, համայնքի ավագանին **որոշում է.՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը ՝համաձայն հավելվածների: /հավելված՝1,2,3,4,5,6,7,8/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Անդրեասյան Արմեն-կողմ

Առաքելյան Սասուն-կողմ

Աթայան Մերուժան-կողմ

Գևորգյան Մարինա-կողմ

Ստեփանյան Դերենիկ-կողմ

Մակիյան Կարինե-կողմ

Համբարձումյան Կարեն-կողմ

Սաղաթելյան Էրիկ-կողմ

Իսրայելյան Գարիկ-կողմ

Հակոբյան Արմեն-կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

27 դեկտեմբերի 2019թ. Քաջարան

Հավելված 1

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու
2019 թ.-ի դեկտեմբերի 23-ի թիվ 49-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ / ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ/ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ /ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ/ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԸ՝

1.Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման,վերականգնման , ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար.

4) Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար.

5)Համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնք սեփականությունը հանդիսացող միջոցառումների սրահների օրավարձը թաղման ծիսակատարությունների և այլ միջոցառումների համար.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.

7) Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար.

8) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար.

9) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար.

10) Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/, ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.

11) Համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.

12) Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար.

